

ուած նաւահանգստի մօտերը, լեհական ազգաբնակիւթեամբ: Բայց ատոր համար պէտք է եղեր երկու մասի բաժանել զերման կայսրութեան հողը. անջատուել է Գերմանիայէն արեւելեան Պրուսիան: Այնպէս որ երբ Բերլինի բնակիչ մը կ'ուզէ երթալ երկաթուղիով Կեօնիգսբերգ զերման քաղաքը, նա ստիպուած է անցնելու Լեհաստանի այդ փոքրիկ հողամասի վրայէն, որ կը կոչուի այսօր լեհական միջանկ:

Արդ, զերմանացիք (եւ հող արդէն ճնշող մեծամասնութիւնն է) կը յայտարարեն, որ պատրաստ են ենթարկուելու Վերսայլի դժբնդակ պայմաններուն, բայց այդ լեհական միջանցքը պէտք է չքանայ: «Կարելի մէջտեղէն անհաղին կայսրութիւն մը՝ հրէշաւոր բան մըն է եւ մենք չենք կարող հանդուրժել այդ», կ'ըսեն անոնք:

Բայց լեհերն ալ կը հակաճառեն.

«Զրկել Լեհաստանը միակ ելքէն դէպի ծով եւ յափշտակել լեհական գաւառ մը, — ատիկա հրէշաւորութիւն մըն է եւ մենք, ի հարկին, կը կռուինք մինչեւ մեր արեան վերջին կաթիլը ու կ'արգիլենք այդ»...

Լեհերու հայրենասիրութիւնը աշխարհահռչակ է: Անոնք պիտի կռուին: Բայց անոնց կացութիւնը նախանձելի չէ: Թշնամիներով շրջապատուած, երկիրը բռնուած անտեսական ու Փինանտական մշտնջենաւոր ճգնաժամով՝ անոնք ներքուստ ալ չեն ներկայացներ կռու ճակատ մը: Վասնզի 30 միլիոն ազգաբնակիւթեանէն 18 միլիոնը միայն կը կազմեն լեհեր, մնացածը ուսւիրներ են, ճերմակ ուսուներ, լիթուաններ, զերմանացիք, չեխեր եւ մեծ թուով հրեաներ, որոնց մէջ ուժեղ է բուլղարիք մի հոսանքը... Ասոնք դրեթէ բոլորը չունին ջերմ բարեկամական զգացումներ դէպի իշխող տարրը: Միմիայն Գալիցիայի մէջ կան մօտ չորս միլիոն ուսւիրներ (ուկրայնցիք), որոնք վաղուց ի վեր կը պայքարին լեհերու դէմ: (Այսօր անոնք ժամանակաւոր զինադուլ բրած են, վաստի լեհերուն հետ միասին ունին ընդհանուր ոսոխ մը — Սովետական Ռուսաստանը): Թշնամիները, ուրեմն, չէնց ներսն են: Եւ երկրի արդիւնաբերութիւնը՝ թոյլ, զինուորականութիւնը, բանակը՝ թոյլ: Լեհաստանը

քիչ-չատ երկար պատերազմի չի կարող դիմանալ...

Մեծապէս կարող էր աջակցել անոր իր դըրացի Չեխօսլավիան, որ աւելի հարուստ է, աւելի ուժեղ, աւելի լաւ կազմակերպուած ու կառավարուած: Բայց մինչեւ օրս չի յաջողուեց կնքել լեհ-չեխական դաշնակցութիւն մը: Երկու դրացիները մօտաւորապէս հայի ու վըրացու յարաբերութիւնն ունին եւ ստէպ կը կրճեն դիրար ոչ-չական պատճառներով: Չեխերը չեն ալ ուզեր զինուորական դաշնակցութիւն մը լեհերու հետ, անոնք դժուարութեամբ կ'երթան արիւն թափելու «լեհական միջանցքին» համար...

Միակ նեցուկը — դաշնակից Ֆրանսան է: Բայց ան ալ շատ հեռու է ու խիստ տկարացած: Ֆրանսական աշխատաւորութիւնը, որ լայնօրէն ճաշակեց պատերազմի արձաւիրքները եւ որ այսօր խորապէս մշակուած է ընկերվարական գաղափարներով, նոյնպէս հաճութեամբ չերթար կռուելու լեհական Կորրիզօրին համար. եւ մի՞թէ Գերմանիան պիտի թոյլ տայ, որ Ֆրանսական զօրքը անցնի իր հողերով՝ դաշնակից Լեհաստանին օգնութեան հասնելու... Եթէ անգամ Ազգերու Դաշնակցութիւնը արտօնէ այդ...

Ոչ մի տարակոյս — Գերմանիան տենդային պատրաստութիւններ կը տեսնէ զայրց «ամէն պատահականութեանց համար»: Եւ ժամանակ առ ժամանակ Ֆրանսայի եւ այլ դաշնակից երկիրներու մամուլը ահազանդ կը հընչեցնէ այդ պատրաստութիւններու մասին: Նորերս հնչեց այդ ահազանդը Բելջիկայի Խորհրդարանէն իսկ: Պատգամաւոր Բրօքսիլը, որ ուշի ուշով ուսումնասիրեք էր Գերմանիոյ զինուորական վիճակը, զգայացունց տեղեկութիւններ հաղորդեց մասնաւորապէս զերման կայսրութեան պահակազօրքի մասին, որ տակէն կ'աճի, կը զօրանայ, կը մարզուի հին զերմանական սխտեմով, որպէս նորագոյն ռազմարանակ մը, թուով համեմատաբար փոքրիկ, բայց որակով՝ ահաւոր... Վերսայլի դաշնագիրը ամէն տեսակ սահմանափակումներ, արգելքներ դրեք է զերման բանակի աճման դէմ, բայց Բերլինեան Բարձր Շտաբը վարպետութեամբ կը խաղայ Դաշնակից կառավարութիւններու հետ եւ նորանոր հնարա-